

ՀԱՅ ԼՐԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵԾ ՎԵՐԱՓՈԽԻՉԸ

Լ. Մ. ԳԵՎՈՐԳՅԱՆ

19-րդ դարի 70—80-ական թվականները հայ լրագրության մեջ նշանավորվեցին Գրիգոր Արծրունու «Մշակ» թերթի հրատարակությամբ, որը նոր էջ բացեց հայ մամուլի պատմության մեջ: Գրիգոր Արծրունուն էր վերապահված լինելու հայ լրագրության մեծ վերափոխիչը, քանի որ նա կարողացավ շոշափել-գտնել ֆեոդալական անուրների մեջ կապկպված հայ կյանքին կենդանություն հաղորդելու համապարփակ միջոցը՝ հվրոպական տիպի ազգային լրագիրը, որը ժամանակից հետ մնացած հայկական ժամացույցի սլաքներն առաջ տանելով, մեղ պիտի հասցներ քաղաքակիրթ ազգերի առաջադիմության արագընթաց գնացքին:

Ազգային համալսարանից զուրկ ժողովրդի համար նա լրագիրը դարձրեց ազգային համալսարան, իրագործեց մամուլը կյանքին մոտեցնելու և կենսական խնդիրներ հուզելու՝ ժամանակի հասունացրած պահանջը, թերթը դիտելով ոչ միայն որպես պատմության տարեգիր, այլև կյանքի վրա ներգործող ղորեղ ուժ:

Արծրունու կենսագրությունը չի կարելի սկսել նրա ծննդյան տարեթվից՝ 1845, որի 150-ամյակն էլ լքացավ 1995 թ. փետրվարի 27-ին¹, նա նշանավոր այրերի թուռ ու զավակ էր, ուստի նախ պապի և հոր մասին. պապը՝ վանեցի մեծահարուստ վաճառական Գևորգ աղա Արծրունին՝ Վասպուրականում թողնելով իր ընդարձակ կալվածները, տներն ու խանութները, 1813 թ. տեղափոխվում է Թիֆլիս, ընդունում ռուսական հպատակություն և կառավարչապետ Երմուզովի միջնորդությամբ, Ալեքսանդր 1-ի հրամանագրով հաստատում իր իշխանական տիրույթը, ծագումը Արծրունիների ազնվազարմ տոհմից: Շուտով նա բարերարի համբավ է վաստակում՝ միջոցներ շինարարելով Աղա Մահմադ խանի արշավանքի հետևանքով ավերված Թիֆլիսը վերականգնելու համար, դառնում է նորակառույց Ներսիսյան դպրոցի հովանավորը՝ նրան նվիրելով Ամստերդամում գնած հայկական տպարանը, որը դառնում է առաջին հրատարակչական կենտրոնը Թիֆլիսում: Հայրը՝ Երեմիա Արծրունին, գինվորական էր, ռուս-պարսկական (1827—1828) և ռուս-թուրքական (1828—1829) պատերազմների մասնակից, եղել է նաև Անդրկովկասյան մաքսատների կառավարչապետ, Թիֆլիսի քաղաքագլուխ: Վերականգնելով խոլերայից մահացած հորից մնացած հարուստ ժառանգությունը՝ Սիոնի հայտնի քարվանսարան, կառուցելով խանութների շարքիս կոչված «գալերեան», ուր հետագայում բացվեց Արծրունյան թատրոնը, Երեմիա Արծրունին չկարողացավ սակայն Դվորցովայա փողոցի վրա գտնվող դրախտային այգում ու շքեղ առանձնատանը երջանիկ կյանք պարգևել իր զավակներին՝ Գրիգորին ու Անդրեասին, որոնք իրենց մոր՝ Ագրիպինա Նազարյան-Արծրունու վաղաժամ մահով զրկվեցին ընտանեկան ջերմությունից՝ փոխաբենը ստանալով խստաբարո, սակավապետ հոր մատուցած սպարտական կյանքի հեռանկարը: Հայրը իր զավակներին լավ կրթության տվեց: 1863-ին

¹ Գր. Արծրունու վերաբերյալ կենսագրական տեղեկությունները քաղել ենք Ալ. Նրիցյանի «Գր. Արծրունու և նրա քսանհինգ տարվա գրական գործունեության աոթթով» (Թիֆլիս, 1890), և. Մալումյանի «Մտքի մշակը» (Թիֆլիս, 1890) և Լեոյի «Գր. Արծրունի» (Թիֆլիս, 1902—1905) աշխատություններից:

Գրիգորն ու Անգրեասը ավարտեցին Թիֆլիսի գիմնազիան ու շարունակեցին կրթությունը նախ Մոսկվայի և ապա Պետերբուրգի համալսարանների բնագիտական ֆակուլտետում: Հայ ազգային-պաշտպանականների առաջնորդ Կարապետ Եզյանի պետերբուրգյան ընտանեկան սալոնը կարճ ժամանակով հրապուրեց երիտասարդ Գրիգորին: Պիսարևի հրաշունչ ռացիոնալիստական հրապարակախոսությունը, որով շնչում էր ուսանողական միջավայրը, արագ չեզոքացրեց պաշտպանողական ազգասիրության նեկտարի քաղցրությունը: Շուտով վերահաս թոքախտը Գրիգորին հասցրեց նիցցա, ուր նա բարեբախտաբար հաջողությամբ բուժվեց, իբրև լրացուցիչ պարգև նվրոպայում կրթվելու հնարավորությունը ստանալով: Յուրիխ, Ժնև, Հայդելբերգ, Փարիզ, Վիեննա, եվրոպական լավագույն համալսարաններում լավագույն դասախոսությունների ունկնդրումը նրան բերեց փիլիսոփայության և քաղաքատնտեսության դոկտորի աստիճան (1869 թ.):

1870 թ. Միսիթարյանների բացառիկ նպաստավոր միջավայրում Արծրունին լրացնում է հայերենի և հայրենագիտության պակասը: «Մեղու Հայաստանի» և «Հայկական աշխարհ» պարբերականներին իր աշխատակցությամբ նա նոր ժամանակների հրապարակախոսի հայտ է ներկայացնում հայ հասարակությանը: Դա «Մշակի» ապագա հրապարակախոսության նախբզանքն էր, որտեղ որոշակիորեն ուրվագծվում են մշակական համանվագի համարյա բոլոր լեյտմոտիվները. ապագա մարտիկը մարտադաշտի զենքերի մեջ ընտրում է քանդող քլունգը, որով պիտի զահնկեց աներ «հին աստվածներին», ազատ պատվանդաններին նորերին բազմեցնելու համար: Վերադարձը Թիֆլիս և շփումը հայրենի իրականության հետ յոթ տարվա բաժանումից հետո երիտասարդ հրապարակախոսին ավելի զամեցին սեփական պարբերական հրատարակելու սկեռուն զաղափարին, որը դարձավ նրա մտքերի միահեծան տիրակալը. դա մարդկային կյանքի այն հազվագյուտ երջանիկ պահերից է, երբ գործիչը հանդիպում է իր կոչմանը: Բայց դա մի դեր էր, որ ենթադրում էր նաև լավ խաղընկերներ: Որտե՞ղ փնտրել նրանց, ի՞նչ ուժերի հենվել, «Վոունկ», «Հայկական աշխարհ» և «Մեղու Հայաստանի» պարբերականների մարմանդ կրակի շուրջ մտավոր ուժերի այնպիսի հավաք չէր եղել, որ հնարավոր լիներ այդ շրջանակներից նոր զորակոչ անել, հարկավոր էր ստեղծել սեփական բանակ: Առաջին «նորակոչիկները» Միհրդատ Ամերիկյանը և Գևորգ Չմշկյանն էին, որոնք իրենց հերթին այրվում էին հայոց թատրոն ստեղծելու զաղափարով, Թերթ ու թատրոն. դրանք կարող էին ձեռք ձեռքի տված առաջ գնալ որպես ժողովրդական լուսավորության երկու օջախներ: Երիտասարդների հաննիքալյան երգումով Թիֆլիսի «Նվրոպա» սրճարանում հիմք է դրվում մի դաշինքի, որին հետո միանում են Պողոս Իզմայիլյանը, Վասիլ Շահվերդյանը, Գաբրիել Սունդուկյանը, Պերճ Պոռչյանը, Ստեփանոս Պալասանյանը և «Մշակի» ապագա բեղմնավոր գլխավոր աշխատակից Մ. լիքզադե-Բաֆֆին: Սա կարելի է անվանել խմբագրական մարմին, որի աղմուկոտ նիստերը խանգարեցին Դվորցովայա փողոցի շքեղ առանձնատան անդորրը, սարսափի մատնելով Երեմիա Արծրունուն, որը բոլորովին այլ կարիերա էր երազում իր որդու համար և ոչ թե ինչ-որ թերթի խմբագիր-հրատարակչի պաշտոն: Հայրը զրկեց որդուն նյութական միջոցներից՝ նրան «զարծի բերելու» նպատակով, սակայն երիտասարդությունն անդրդվելի էր. թերթի անունն ընտրված էր, ծանուցումը՝ հրապարակված: Անվանակոչությունն ավարտվել էր, կարելի է ասել, լավագույն անվան ընտրությամբ՝ «Մշակ». այն ավելի քան խորհրդանշանային էր. դեմոկրատիկ շեշտ ուներ, մտքի մշակի առաքելություն, որը գիտություն ու լուսավորություն պիտի տարածեր ժողովրդի մեջ, սերմաներ այն ազդեցական մտքերը, որոնք կարողանային նպաստել ժողովրդական կյանքի պայմանները բարելավացնելուն, ինչպես հայտնվում է 1871 թ. սեպտեմբերին հրապարակված ծանուցաթերթում:

«Մշակի» առաջին համարը լույս տեսավ 1872 թ. հունվարի 1-ին: Չորս սյունակից կազմված փոքրածավալ թերթը իսկույն բացում էր ընթերցողի առջև իր բովանդակությունը, իսկ մտերմիկ, անպաճույճ լեզուն կամուրջ գցում դեպի նրա սիրտը: Խոշոր տառերով շարված առաջնորդողը հռչակում էր նոր պարբերականի մանիֆեստը, որը խմբագիրը վերնագրել էր՝ «Երեկ, Այսօր և էդուց»: Մերժելով ազգասիրության երեկվա չափանիշները, որոնք անյայլի փառավոր հիշատակներով շոյում էին հայերի փառասիրությունը, Լրիտասարդ խմբագիրը սրում է հասարակության վերանորոգության խնդիրը, այն լծողելով «կենսական երևույթների խորը քննադատության» ու «անխոնջ անձնաքննության»։ Ոչ թե լուսավորության վերացական քարոզ, այլ «ճիշտ գիտությունների վերստին հիմնված մտախոհության եղանակ», առաջարկում է խմբագիրը և ձևակերպում իր կարգախոսը՝

«Երեկ մենք կտակարանական ազգ էինք,
Այսօր մենք ազգասերներ ենք,
էդուց պետք է աշխատողներ դառնանք»:

Սա փաստորեն կապիտալիստական ազատ մրցակցության և գործարարության հաստատման կոչ էր: Արժրուներին լեռան ստորոտում էր, լի ոգևորությամբ ու հավատով: Նա ոգեկոչում է ազգի հավաքական ուժերը, բարիքը կանխապես բաժանված տեսնելով նրա բոլոր անդամներին:

Եթե թերթինք «Մշակի» առաջին տարվա հավաքածուն և աչքի անցկացնենք առաջնորդողները, կթվա, թե դրանք մեկը մյուսի շարունակությունն են: Վերնագրերը շեշտում են հարցադրումները, որոնց մեջ այնքան ուժեղ է Արժրուների հրապարակախոսը, լուծումները թողնելով մոտիկ ապագային, սահմանում են հարձակման ճակատները, շեշտելով «հայրեր և որդիներ» թեման, որը ինքնակենսագրական դրդիչներ ունեն: «Դուք և մենք», «նոքա» կարճ վերնագրերով առաջնորդողները (№ 2, 12) հին սերնդի դամբանականն են բովանդակում. «Անցյալը նոցա էր պատկանում... Ապագան մեզ է պատկանում», — գործի է մղում նոր սերնդին խմբագիրը՝ չթաքցնելով իր դժգոհությունը նաև իր սերնդակիցներից: Ահա մեկ ուրիշ վերնագիր՝ «Մտրակով չխփես, բան դուրս չի դա»: Ցավալի անշարժությունը Արժրուներին բացատրում է հասարակական խթանի բացակայությամբ, ընդամին պահանջելով մտրակահարել ոչ միայն հնամուլ ժերերին, այլև «պառավ երիտասարդներին»: Այս ելույթներով «Մշակը» վաստակեց «մտրակողական» մականունը, որը հպարտությամբ կրում էին մշակականները:

«Մեր ամենամեծ թշնամիները» առաջնորդողը (№ 40) բովանդակում է հարցադրման աներկբա և շիտակ պատասխանը. «Վերջապես պետք է հասկանանք, որ այն հասարակությունը, որը հրաժարվում է ինքն իրան քննության տակ դեմ, ինքն իրան դատապարտում է հավիտենական անշարժության, ուրեմն հասարակական մահվան: Չմոռանանք մի բան, որ մինչև այս վերջին ժամանակներս մեր ամենամեծ թշնամիները՝ մենք ինքներս էինք»: «Մշակի» էջերում թեմատում էր խնկելի նախորդի՝ «Հյուսիսափայլի» կրիտիկական ոգին, որի գործը շարունակելու մշակական հայտը միանգամայն արդարացված էր:

Անդրադառնալով խմբագրի կոչմանը «Մեզանից պահանջվում է զոհաբերություն» առաջնորդողում (1873, № 45) և դառնությամբ նշելով լուսավորված աշխարհից չինական պարիսպով անջատված հայրենի իրականության մասին, որը խորթ մոր նման է վարվում իր կրթյալ զավակների հետ, երիտասարդ հրապարակախոսը ծառս է լինում. «Մենք համոզված ենք, որ մեզ սպասում է տանջանք, անդադար կռիվ, բարոյական պատերազմ, անվերջ շարժարանք, որ միակ վարձատրությունը վերջը լինելու է՝ երիտասարդ հասակում մի դազադի մեջ հավիտեցական փուլ... բայց այնուամենայնիվ պիտի գանք, որ կռվենք, մինչև վերջին շունչը պատերազմենք հնամուլ, ճշմարտ, անձնապաշտ հասարակության հետ»: Թվում է՝ իր կենսագրության գա-

լիք էջերն է կարդում 28-ամյա խմբագիրը, թողնելով մեզ վաղաժամ արված մի կանխագուշակում. «ավա՛ղ, այնքան ճշտությամբ իրականացած: Այստեղ տեղին է հիշել Տերյանի խոսքերը. «Մի Րաֆֆի, մի Արծրունի, մի Նալբանդյան, մի Դուրյան նույնպես ասպետներ են, գուցե ավելի մեծ հերոսներ են, քան նրանք, որ կռվի դաշտում են զոհում իրենց կյանքը»: Մի՞թե Արծրունու կյանքը մի իսկական պատերազմ չէր, գիտակցված նահատակություն և ի վերջո շահած ճակատամարտ:

Իր արած գործի, իր կոչման լիակատար ըմբռնումով հրապարակ հանեց և հրատարակեց «Մշակը» Արծրունին, արմատապես վերափոխելով հայ լրագրությունը: Նա ոչ միայն ուրիշների համար լայն արահետ բացեց և բազում հետևորդներ ասպարեզ հանեց, այլև ստիպեց աշխուժանալ անգամ հակառակորդ պարբերականներին:

Հասարակարգերի հաջորդափոխության բեկումնային փուլում, ինչպիսին 19-րդ դարի 70-ական թվականներն էին, ազգի զարգացման ուղիների հարցը դառնում է հասարակական միտքը խմորող հիմնախնդիրը: Հարցի լուծման եղանակներն էլ մտավորականներին խմբավորում են հասարակական-քաղաքական տարբեր հոսանքների շուրջ: Պայքարի հիմնական թատերաբեմը դառնում է մամուլը: Արծրունյան «Մշակը» ոչ միայն տարեգրել է պատմական այդ փուլը, այլև թեժացրել պայքարի կրակը, դառնալով հայ ազատամտականության դրոշակակիրը, միաժամանակ ամբիոն տրամադրելով հայ դեմոկրատ գործիչներին, որոնց պարագլուխը՝ Րաֆֆին «Մշակի» գլխավոր աշխատակիցն է եղել 14 տարի և որը նա համարել է իր կենսագրության ամենապայծառ էջը:

«Տնտեսական խնդիրը» «Մշակում» ամենից շատ կրկնվող վերնագիրն է: Դա տնտեսագետ խմբագրի նախասիրության հարց չէր, այլ բխում էր նրա ղեկավարած հոսանքի բուն էությունից, որը տնտեսական խնդրով էր պայմանավորում ազգի նաև հոգևոր ու բարոյական զարգացումը. «Մի ազգի տնտեսական կյանքից է կախված նրա մտավոր և բարոյական զարգացումը» (1881, № 100):

Անդրկովկասը մտնում էր արդյունաբերական կապիտալիզմի փուլը, և «Մշակը» ճիգ էր թափում այն մղել քաղաքակիրթ հուն, նա կոչ էր անում հայ կապիտալիստներին հրաժարվել ասիական հին մտածելակերպից, որը կառնում է օրվա օգուտից, մոռանալով վաղվա հեռանկարը, շարշիական վաճառականության փոխարեն կապիտալի նետել արտադրության ոլորտ, սովորել Անդրկովկասում արմատավորված օտար կապիտալիստներից՝ հենց նրանց հաղթելու և արտամղելու համար, որպեսզի անզական հարստությունները չլցվեն օտարների գրպանները: Զհետևել տնտեսության քաղաքակիրթ ձևերին, նշանակում է ինքնասպանություն գործել,— զգուշացնում է տնտեսագետ խմբագիրը:

Աղգային-պահպանողականությունը կռթնում էր բարոյական ուժին, ազգի լուսավորությամբ և հոգևոր վերածննդով պայմանավորելով նրա տնտեսական առաջադիմությունը, միշտ նախանձախնդիր նրա ավանդական դիմագծի պահպանմանը: Բանավեճն անխուսափելի էր, իսկ ճշմարտությունը երկու տեսակետների հաշտեցման և ծայրահեղություններից ձեռքազատվելու մեջ էր:

«Մշակի» շուրջն էր համախմբվել հայ մտավորականների այն մասը, որը կրթություն ստանալով Եվրոպայում, հայրենիք էր վերադարձել եվրոպական կենսափորձը հայկական կյանքին պատվաստելու անկոտրում ցանկությամբ: Հայ իրականության մեջ ևս, ինչպես ռուսականում, գործել է արևմտականների մի սերունդ, որի գործունեությունն արգասավորվեց «Մշակի» հրատարակությամբ: Արծրունին դարձավ, կարելի է ասել, հայ արևմտականների առաջնորդը, որը քննադատելով հայկական կյանքի հետամնացությունը, դրան հակադրում էր լուսավոր Եվրոպայի հասարակական կենսաձևերը, ընդսմին յուրաքանչյուր երկրից նախընտրելի կողմերին զուգահեռ ցուցադրելով:

րելով նաև մերժելին, ձգտելով ոսկե միջինին, որը միշտ զերծ է թվում ծայրահեղություններից:

Ամենից յա՛վ և մոտիկից Արծրունին ճանաչում էր Գերմանիան, որտեղ կրթվել էր: Դա րիսմարկյան Գերմանիան էր, կապիտալիզմի զարգացման իր այսպես կոչված պրոսական ուղիով, որը նախընտրելի էր թվում հայ ազատամտականության առաջնորդին, իր խաղաղ, հանդարտ ընթացքով: Եթե Գերմանիայի միավորումը իրականացնելու համար Բիսմարկը հորջորջվում է «հեղափոխական հանճար», ապա դաժան ու մերժելի են դիտվում նրա «բացառիկ օրենքները» ուղղված գերմանական սոցիալ-դեմոկրատների դեմ, թեև Արծրունին վերջիններիս համակիրներից չէր: Նա դատապարտում է նաև Բիսմարկի ազգայնամոլական արտաքին քաղաքականությունը և առաջիններից մեկն էր, որ զգուշացրեց թուրք-գերմանական մերձեցման վտանգավորության մասին:

Ինչ վերաբերում է Ֆրանսիային, ապա ընդհանրացնելով նրա անցած պատմական ուղին «Գերմանիա և Ֆրանսիա» վերնագրով առաջնորդող հոդվածում (1874, № 4), Արծրունին դրում է. «Ֆրանսիայի ամբողջ պատմության ընթացքը ներկայացնում է մեզ անընդհատ հայտնվող հեղափոխությանց պատկերը: Եվ այդ բոլոր շարժումները մնում են ապարդյուն՝ հեղափոխություն անելուց հետո, Ֆրանսիան դարձյալ ընկնում էր նույն դրության մեջ և գուցե ավելի սաստիկ բռնավորության էր ենթարկվում, քան առաջ... Ցավալի է, երբ այն ազգը, որ կարծում է իրեն մարդկության կրթության առաջնորդող, ստիպված է խոստովանել, թե իր պատմական ընթացքի, իր հասարակական կյանքի վերջին խոսքը հեղափոխությունն է»: Ազատամիտ Արծրունին հեղափոխության երդվյալ թշնամի է. ըստ նրա ազատությունը և հեղափոխությունը «հակառակ սկիզբներ են, միմյանց հակասող գաղափարներ»: Բնշո՛ւ. բացատրությունը անառարկելի տոնով է ասված. «Ազատությունը չէ հերքում հակառակորդի իրավունքը, իսկ հեղափոխությունը հարձակվելով բռնավորության դեմ, ինքն ևս բռնավորության զենքով է կոպտ, որովհետև աշխատում է հակառակորդի գործությունը կոպիտ ուժով, զորով, բռնի ունչացնել»: Հեղափոխությունը դիտվում է առաջադիմության անընդհատ զարգացումը խաթարող հարված, որի հակակշիռը քաղաքական ազատությունն է. «Ազատությունը քաղաքական կյանքի մեջ... հավասարակշռություն է: Եթե մի պետության մեջ իշխում է մի քաղաքական կուսակցություն միայն, այն ժամանակ ժողովրդի քաղաքական կյանքը միակողմանի կլինի. ինչքան կզարգանան, կբազմանան քաղաքական զանազան կուսակցությունները, այնքան հասանելի կլինի ժողովրդին քաղաքական ազատությունը... Եթե քաղաքական կյանքի մեջ անհատը կուրորեն հպատակվում է հասարակությանը, չկա ազատություն, եթե հասարակությունը կուրորեն հպատակվում է անհատին նույնպես չկա ազատություն»: Հնության փոշին, ասես, չի նստել այս խոսքերին:

Կապիտալիզմի դասական երկիրը՝ Անգլիան, իր երկու կուսակցությունների՝ լիբերալների և պահպանողականների, քաղաքական պայքարով «Մշակի» արտաքին տեսությունների հիմնական թեմաներից է: Այն զուգահեռների հնարավորություն էր տալիս Արծրունուն հայ պահպանողականների դեմ մղած պայքարում, և այդ պատճառով լիբերալները և նրանց առաջնորդ Գլադստոնը արժանանում են լուսապսակի, իսկ պահպանողական Անգլիան մշտուպես սուր քննադատության ու պարսավանքի թիրախ է, մանավանդ Հայկական հարցում՝ նրա բռնած նենգ դիրքի պարագայում:

Եթե Եվրոպայում կա մի երկիր, որի կյանքի բոլոր կողմերը անվերապահորեն օրինակելի են թվում Արծրունուն, ապա դա Շվեյցարիան է: Փոքրիկ հանրապետությունը իր կոնֆեդերատիվ կառուցվածքով, ինքնավար տարազգի համայնքներով, օրինակելի դպրոցներով, սոցիալական անարդարությունը մեղմող բարեգործությամբ մնում էր «Մշակի» տեսաբանների գա-

զափարական զինանոցը՝ ըղձալի դարձնելով այդպիսի հեռանկարը նաև Ռուսաստանի նման բազմազգ պետությունում:

Ազատագրական շարժումներն իտալիայում «Մշակի» մշտական հիացմունքի առարկան են. իտալիայի օրինակի վրա «Մշակը» ձևում էր ազգային-ազատագրական պայքարի իր ոչ միակ, բայց գլխավոր իդեալը: «Ոչ մի տեղ ազգային զաղափարը չունեցավ այնքան զորեղ, համարձակ կուսակցություններ, ոչ մի տեղ բազմությունը այնքան չէր համակրում և մասնակցում իր հայրենիքը օտարների լուծից ազատելու շարժման մեջ, որքան իտալիայում: Ոչ մի տեղ այդ ժողովուրդը այնպես միաձայն չէր ձգտում ազգի զանազան մասերը միացնել, որքան իտալիայում: Փառավոր անուններ, ինչպես Մաձձինի, Գարիբալդի, իտալացիների սրտերում անջնջելի կերպով դրոշմվեցին: Գարիբալդին, օրինակ, ներկայացնում էր անձամբ մարդկային պատմության մեջ վաղուց շտեմած ժողովրդական հերոսի պատկերը» (1872, № 25): Այս խոսքերը ոչ միայն պանծացնում են իտալիայի մեծ զավակին, այլև պատիվ են բերում «Մշակին»: «Մշակի» 1882 թ. մայիսի 27-ի համարը բացվում է «Ջուզեպե Գարիբալդի» հոդվածով: Իտալիայի ազգային հերոսի մահը ստիպել էր հայ խմբագրին գրիչ վերցնելու և գրելու իր լավագույն հոդվածներից մեկը, պատմելու մի մարդու մասին, որին տեսել էր անձամբ և որի ժողովրդը դականություն ու փառքին վկա էր եղել: «Մշակը» համերաշխ է իտալական թերթի կարծիքին, թե Գարիբալդին «այն Պրոմեթեոսն է, որ աղատեց իտալիան ստրկությունից: Նա մարդկության ամենամաքուր և ամենաազնիվ պատկերն է... պետք է կարդալ մի քանի դարերի պատմությունը, Եվսեբ է հավաքել ամենաբարձր ընդունակությունները, որոնք ցրված է մարդկության ամենաբարձր զինվորների մեջ, որպեսզի կարողանանք ստանալ հերոսություն և ազնվության այնպիսի տիպ, ինչպիսին էր Գարիբալդին: Ահա այդպիսի մարդ ծնեց ժամանակակից իտալիան» (1882, № 101): Այս հոդվածները մի անթաքույց հարց էին առաջադրում՝ իսկ ե՞րբ պետք է հայ ժողովուրդը ծնի իր Գարիբալդին...

Եվրոպայում կրթված նախկին ռոմանտիկ ուսանողները, սակայն, քաղաքական անցքերի բերումով առիթ ունեցան հիստորիկական եվրոպական քաղաքակրթության կուրացուցիչ փայլից: Միայն Արևելյան հարցը, որի մեջ այնպես ողբերգականորեն խճճվեց Հայկական հարցը, բավական էր տեսնելու եվրոպական պետությունների մյուս՝ թաքնված երեսը:

«Մշակի» հրապարակած նյութերով կարելի է բազմազատոր ժողովածունքի կազմել, որոնք փաստերի պերճախոս լեզվով կպատմեն արևմտահայության անտանելի ծանր վիճակի մասին օսմանյան բռնապետության լծի տակ, հասկանալի դարձնելով նրա ազատագրական ընդվզումների դրդապատճառները: Ազգի քաղաքական հասունացումն արագացնելու նպատակով «Մշակի» խմբագիրն անհրաժեշտ էր գտնում արևմտահայությանը ձերբազատել ամեն մի պատրանքից, թե Թուրքիայի պես հետամնաց բարբարոսական երկրում հպատակ ժողովուրդները կարող են հուսալ քաղաքական ազատություններ և քաղաքացիական հավասար իրավունքներ: Նա ընտրեց երկու նշանախնդ, որոնց վրա տեղացի իր քննադատական խոսքի տարափը. առաջինը արևմտահայերի Ազգային սահմանադրությունն էր, երկրորդը՝ օսմանյան սահմանադրությունը:

Արևմտահայ սահմանադրությունը, հռչակված 1860 թ. մայիսի 24-ին, արդեն անցել էր «գործադրման» բավականաչափ ժամանակ՝ նրա իրական արժեքը որոշելու համար: Ծիշտ է, այն լույս աշխարհ եկավ ոչ թուրքական իշխանությունների բարի կամոք, այլ իբրև արևմտահայերի երկարատև ու համառ պայքարի արդյունք, բայց ի սկզբանե արդեն զրկված լինելով քաղաքական ուժից, քանի որ չէր երաշխավորում հայերի ապահով գոյությունը Թուրքիայում, հետագա տարիներին ենթարկվեց այնպիսի աղճատումների, որ միանգամայն արժեզրկվեց. ի՞նչ սահմանադրություն, եթե այն չի տարածվում գավառի վրա, որտեղ ազգի մեծամասնությունն է ապրում և են-

Թարկվում անմարդկային բռնությունների ու հարստահարությունների, իրավացիորեն դատում էր «Մշակը»։ Օսմանյան կայսրության դեմ սլավոնական ազգերի աննախադեպ ընդվզման պահին հարկավոր էր արևմտահայությանը նույնպես զորակոչել սուլթանիզմի դեմ ոտքի ելած բազմազգ զորանոցը՝ զենքով իսկական սահմանադրություն և ազատություն նվաճելու համար։ «Ազդասիրական խաբեբայություն» խոստովանող և վերնագրով առաջնորդող հոդվածում (1876, № 45) Արծրունին այսպես է գնահատում պատմական պահը. «Եվ այժմ, երբ որ Թուրքիան գտնվում է սարսափելի քաղաքական կրիզիսի մեջ, հանկարծ հայտնվեցավ, որ Թուրքիայի հայերի դրության վրա մեղ պատմած բոլոր գեղեցիկ բաները առականք էին։ Կրիզիսի ընթացքում հայտնվեցավ, որ հռչակված սահմանադրությունը անզոր է պաշտպանել հայերին տերություն կամայականության և բարբարոսության դեմ, անզոր է պաշտպանել Թուրքաբնակ հայի ամենաանհրաժեշտ, անբռնաբարելի մարդկային իրավունքը»։

Հետևելով Թուրքիայի սահմանադրական-լիբերալ շարժմանը, նրա գաղափարախոս Միդհատ փաշայի ելույթներին, Արծրունին կանխապես տալիս էր ապագա ապրանքի գինը, սրամտորեն նետելով. «Եթե սուլթանը այժմ հրապարակեք մինչև անգամ Ամբրիկայի Միացյալ Նահանգների կամ Շվեյցարիայի հանրապետության սահմանադրությունը, դարձյալ ապարդյուն կլինի այն ժամանակ, երբ արդեն պետությունը կատարյալ անկման մեջն է, երբ հիմքը փտած է, երբ անբարոյականությունը, կաշառակերությունը արմատացած են հասարակության մեջ, երբ ժողովրդի մեջ հիմնավոր տարրական կրթություն չկա» (1875, № 51)։

Սուլթանը հետամուտ էր սահմանադրության հռչակումով կանխել ճնշված ազգերի ազատագրական ընդվզումները, բայց ապարդյուն. մեկը մյուսի հետևից ոտքի են ելնում բուլղարները, հերցեգովինացիները, բոսնիացիները, սերբերն ու շեքոսլովենները։ Բալկանյան պատերազմը դառնում է «Մշակի» արտաքին տեսությունների հիմնական նյութը, ունենալով մի հարակա շեշտ՝ հարկավոր է օրինակ վերցնել սլավոններից, միանալ նրանց, օգտվել պատմության ընձեռած բացառիկ նպաստավոր պահից։ «Այժմ կամ երբեք» վերնագրով է Արծրունին՝ գրիչը ձեռքն առնելով հերթական առաջնորդող գրելու (1876, № 25)։

Մի իսկական մարտական զենք է դառնում «Մշակի» էջերում Բաֆֆու գրիչը։ Դժվար է սահման գծել նրա հրապարակած հոդվածների և գեղարվեստական գործերի միջև, որոնք ծառայում էին մի նպատակի՝ ազգին ազատագրական պայքարի ձգեկոչելուն։ Բաֆֆու և Արծրունու համագործակցությունը խառնված էր ազգային շահի ամուր պատվանդանին, իսկ հարաբերություններին խզումը՝ պարտադրված լիբերալ և դեմոկրատական հոսանքների տարանջատման պատմական իրողությամբ։

Նույն նպատակով Արծրունին ամբիոն էր տրամադրում մեր մյուս նշանավոր դեմոկրատ գործիչներին՝ Հայկակ-Արփիար Արփիարյանին, Մկրտիչ Փորթուզալյանին, Արսեն Թոփմախյանին, Խ. Մալումյանին, Սողոմոն Նիդազարյանին և մյուսներին, որոնք դեմոկրատական շեշտեր էին հաղորդում «Մշակին», իրենց սուր հարցադրումներով հաճախ առաջ անցնելով իրենց մեկնասիրից։ Բայց դա նույնպես խմբագրի վաստակն էր, որը դիտեր գրչի զինվորներ հավաքագրել։

Արևելյան խճճված հարցի գորղյան հանգույցը կտրելու դերը Արծրունին վերապահում էր Ռուսաստանին, ցարական ինքնակալության արտաքին քաղաքականության օբյեկտիվ հետևանքների մեջ դրական արդյունք տեսնելով օսմանյան լծի տակ տառապող ազգերի ճակատագրի համար։ Ինչ վերաբերում է իր ազգակիցներին, ապա «այդ տոկուն, աշխատասեր, քրիս-

2 Այս մասին տե՛ս Աշ. Հովհաննիսյան, «Արծրունու և Բաֆֆու գաղափարական ներհանությունը», Բանբեր Երևանի համալսարանի, 1968, № 1, էջ 15—30։

տոնհոլթիան գաղափարին իրեն զոհած ազգութիւնը՝ հայերը, կարող էին որպէս միջոց ծառայել Փոքր Ասիայում Ռուսաստանի նպատակը իրագործելու համար: Հայերը կարող էին Ռուսաստանի համար ամենահավատարիմ միջնորդներ լինել, նպաստելով այդ պետութեան նպատակներին և կոչմանը՝ տարածել և մտցնել Փոքր Ասիայում Ավետարանի և եկրոպական կրթութեան լույսը, ուրեմն և ընդհանուր մարդկային քաղաքակրթութիւնը (1876, № 24): «Միակ փրկութիւնն է միանալ Ռուսաստանի պետութեան հետ: Ուրիշ ելք չկա» — հավաստիացնում է «Մշակի» խմբագիրը՝ միաժամանակ գծելով այն դժնդակ պատկերը, որն անխուսափելիորեն կդառնար հայերի բաժինը իրենց պատմական հայրենիքում, եթե նրանք ոտքի չկանգնեն. մի 20—30 տարուց հետո ճանապարհորդը Փոքր Ասիայում քրիստոնյաների անթիվ-անհամար գերեզմաններ կտեսնի իբրև ապացույց, որ այստեղ մի ժամանակ հայեր են ապրել: Մեծ հրապարակախոսներին հատուկ դաժան մարգարեութիւն՝ մեծ եղեռնի ուրվականով...

Անարդարացի կլինի Արծրունու ռուսական կոլմնորոշման մեջ հաշտվողական վերաբերմունք տեսնել ցարական ինքնակալութեան վարած նվաճողական քաղաքականութեան նկատմամբ: Դա ժողովրդի հավաքական գիտակցութեամբ հասունացած քաղաքական կոլմնորոշում էր, որքանով մեծ գործիչները մարմնավորում են հանրութեան կամքը:

«Մշակի» 1876 թ. № 47-ր բացվում է «Հայոց խնդիր» վերնագրված առաջնորդող հոդվածով, որով Արծրունին քաղաքացիական իրավունք է տալիս այդ տերմինին. «Այժմ էլ տարակուսել չի կարելի, թե ինչպէս կա սլավոնական խնդիր, կա հունական խնդիր, նույնպէս դրած է եկրոպական դիպլոմատիայի առջև և հայոց խնդիր»: Հայ ժողովրդի պատմական ճակատագիրը Արծրունուն տխուր խորհրդածութիւնների է մղում. մինչդեռ այլևայլ ժողովուրդներ իրենց խնդիրը միջազգային դատարան են ներկայացնում զենք վերցնելով, արյուն թափելով, հայերն ընտրել են մի տարօրինակ ճանապարհ. «Հայոց ազգը մի ուրիշ զարմանալի հատկութիւն ունի և այդ հատկութիւնը նշմարելի է նրա մեջ իր ամբողջ պատմութեան ընթացքում: Նա ուղում է խելքով, մտավոր գնքով, ապացուցներով, դատողութիւններով հաղթել թշնամուն: Նորան ճնշում են, վիրավորում են, բանտարկում են, սպանում են, իսկ նա փիլիսոփայութիւններ է անում, ապացուցանում է, որ այդ անարդար է, վիճում է իր ճշողի, իր հալածողի, իր թշնամու հետ: Ծանր էր այս տողերը գրելը, բայց աղդին պետք էր հանել ընդարմացած վիճակից, հասկացնել, որ իր պատմական հայրենիքից գաղթելը ոչ թե պատիժ էր թուրք նվաճողներին, այլ հայրենիքը կամավոր նրանց զիջելու երեւոյթ:

«Մշակի» 1877 թ. ապրիլի 18-ի առաջնորդողը վերնագրված էր «Պատերազմ»: Անսպասելի իրադարձութիւն չէր ռուս-թուրքական պատերազմը, թրիստոնյաների պաշտպանութեան գործը ընդդեմ մահմեդական բարբարոս ճնշման, այն անվերջանալի Արևելյան խնդիրը կվճռվի ոչ թե անորոշ դիպլոմատիական բանակցութիւններով, այլ սրով և արյունով», — գրում է Արծրունին: Նա փորձում է գուշակել պատերազմի արդյունքը. «Թուրքիայի վերջին ժամը հասավ: Թուրքիան կազմող բոլոր երկրները կտոր-կտոր ընկնելու են. այդ երկրներից ամեն մինը կամ կմիանա ուրիշ երկրի հետ, կամ կկազմի մի անկախ փոքրիկ պետութիւն» (1877, № 32): Պատերազմի ավարտից հետո Արևմտյան Հայաստանի՝ Ռուսաստանին միանալու մեջ է Արծրունին տեսնում Հայկական հարցի լավագույն լուծումը: Սակայն եթե դա չհաջողվի, հայերը պետք է ձգտեն, դարձյալ Ռուսաստանի օգնութեամբ, ստանալ գոնե ինքնավարութիւն:

Քաղաքական նոր իրավիճակի՝ պատերազմի պայմաններում, երբ Թուրքիայի երիտասարդ բուրժուազիայի սահմանադրական կրքերը շովինիզմի կերպարանք առան և այդ հողի վրա հոգեհարազատութիւն ցուցադրեցին սուլթանի՝ հպատակ ազգերին ճնշելու և ոչնչացնելու անսքող քաղաքակա-

նության հետ, Արծրունին հանդես եկավ «Հին և նոր թուրքեր» ուղագրավ անալոգիայով, ընդամին ավելի վտանգավոր գտնելով վերջիններին. հետամնաց, նախապաշարված, մոլեռանդ «հին օսմանցու» դիմաց կանգնած էր եվրոպական քաղաքակրթության դիմակ հագած «եռիտասարդ թուրքը», որը եվրոպայում ոչինչ հիմնավոր չսովորելով, պահպանել էր հների մոլեռանդությունը և ատելությունը դեպի այլազգիները: Արծրունին ծաղրում էր Միդհատի հավակնոտ հայտնությունները, թե իբր իսլամը Արևելքում հիմք դրեց ռամկապետության և ազատամտության: Ավելի քան ծիծաղելի էին քրիստոնյաներին «օսմաններ» անվանելու «քնքույշ» զեղումները, թե բաժանված լինելով ծաղումով ու կրոնով, մենք կարող ենք և կամենում ենք միանալ հայրենիքի սիրո մեջ» (1877, № 64): «Ընդհանուր հայրենիքի» կարգախոսի տակ թաքնված էր այլազգիներին դիմազրկելու, նրանց ինքնորոշումը խափանելու ձգտում միայն: Այսպիսով, «Մշակը» ընթերցողին տեսանելի էր դարձնում քաղաքական այն կոմպրոմիսը, որը սահմանադրության օղակով իրար էր կապում սուլթանի ռեժիմն ու այսպես կոչված «Մանուկ թուրքիան»: Արծրունին ընթերցողին երկմտելու տեղ չէր թողնում գրելով՝ «թուրքաց տնրության պես վայրենի, բարբարոս տերութենից մարդկային իրավունքներ պահանջելու համար ուրիշ ճանապարհ չկա, եթե ոչ ղենջը ձեռին արյուն թափելով» (1879, № 103):

Երբ հայտնի դարձավ Ռուսաստանի և Թուրքիայի միջև կնքված Սան-Ստեֆանոյի հաշտության պայմանագիրը, Արծրունին շտապեց օրվա առաջնորդողը վերնագրել «Հայաստանի ինքնավարությունը» (1878, № 37): Նա ակնհայտորեն վարդապույն ակնոցներով էր կարդացել Հայաստանին վերաբերող 16-րդ կետը: Բեռլինի կոնգրեսի 61-րդ հոդվածը սառը ջուր լցրեց նրա ոգևորության վրա: «Մշակը» ստիպված էր արձանագրել ազգովի հիասթափության պահ, երբ, առաժի խոսքերով, լեռը մոկ ծնեց: Արծրունին դառնությամբ եզրակացրեց՝ «Այն ազգերը, որոնք զենքը ձեռին ապստամբվեցան տերության դեմ, եվրոպական դիպլոմատիան շնորհեց նրանց այս կամ այն մարդկային իրավունքը, իսկ հայոց ազգը ոչինչ չստացավ, որովհետև հնազանդ էր մնացել տերությանը» (1878, № 165):

19-րդ դարի քաղաքական բարոյականությունը Արծրունին բանաձևում է աֆորիզմով. «Նա ապստամբվում եմ, ուրեմն ես կամ»: Հայերը, ցավոք, ուշ հասկացան այս ճշմարտությունը:

Բեռլինի կոնգրեսից հետո, երբ ռուսական զենքի նվաճումները մեծ տերությունների համատեղ ջանքերով նվազագույնի հասցվեցին և, մանավանդ, երբ 80-ական թվականներին Հայկական հարցի նկատմամբ ցարական կառավարության քաղաքականության մեջ աննպաստ շրջադարձ տեղի ունեցավ, «Մշակի» խմբագիրը ստիպված էր նոր դիրքորոշում մշակել. «Խաղաղ պատերազմ» առաջնորդողը հռչակում էր նոր կարգախոսը. «Մեր կոնկրետ այս անգամ Փոքր Ասիայում ոչ թե պիտի լինի սրով ու հրով, այլ հաշտ ու խաղաղ միջոցներով» (1879, № 35): Հիշեցնելով հայերի դարավոր քաղաքակրթական հակումը, Արծրունին խնդիր է դնում կրթել նաև թուրքերին ու քրդերին. «Պետք է աշխատել լուսավորել և այն բարբարոսներին, որոնք ամեն րոպե պատրաստ են քեզ կտոր-կտոր անել... Հարկավոր է, ուրեմն, ապահովել ապրելու համար նախևառաջ աշխատել սուր կրողի ձեռքից խլել սուրը, լուսավորել նրան»: Նման հարցադրումը աքիլլեսյան գարշապար էր բացում Արծրունու հրապարակախոսության մեջ, ինչից շտապում էին օգտվել նրա հակառակորդները:

«Թուրքաց հայերի տնտեսական դրությունը» զեկուցումով, որով Արծրունին հանդես եկավ Թիֆլիսի Արհեստավորաց ընկերությունում 1879 թ. մարտի 11-ին, «Մշակի» խմբագիրը ասես ամփոփում է իր ծրագիրը. «Գուցե և հայերին վիճակված է թեև ոչ այնքա՜, բարձր, բայց նույնպես մի նոր, քաղաքական սկզբունք ավետել մարդկությանը, այն է, որ կարելի է հասնել ազատությանը քաղաքակրթական խաղաղ պատերազմով, առանց ապստամբ-

վելու, առանց զենք բարձրացնելու... Գուցե հայերին, Արևմտյան լուսավորված Եվրոպայի ժամանակակից անմարդասեր գաղափարի դեմ այդ կենդանի բողոք ներկայացնող ազգությամբ վիճակված է ոչնչացնել այն անբարոյական սկզբունքը, որ պահանջում է ձեռքով ազգից, իր գոյությունը ապացուցանելու համար զենք վերցնել, ապստամբվել, արյուն թափել. ուրեմն գործ դնել ձեռող ուժից, բարբարոսությունից ազատվելու համար, նույն զենքերը...» (1879, № 75):

Արժրունին մենում է աղատամտականության դասական ներկայացուցիչ, քաղաքակրթության նվիրյալ պատգամախոս: Արժրունին մերժում էր սոցիալիզմի գաղափարախոսությունը, այն անվանելով «սարսափելի», «վտանգավոր սոցիոկրիյա շարժում»: Ուշագրության է արժանի նրա մի անվերապահ հայտարարությունը. «Մենք՝ անդրկովկասյան բնակիչներս, մանավանդ սաստիկ պահանջողական, կոնսերվատիվ հայոց տարրը, այդ տեսակ հարցերում ավելի անկողմնապահ կարող ենք դատել, որովհետև մեր բնավորության հակառակ է սոցիալիզմի որևէ գաղափարը, մեզ անհասկանալի են այդ երազական մտքերը: Անդրկովկասը երբեք չի ներկայացնի մի հարմար հող սոցիալական որևէ պրոպագանդայի համար» (1879, № 48): Ավելի քան մեկ դար է գլորվել այս խոսքերից հետո, և դառը ժպիտը կարող է լինել մեր արձագանքը հրապարակախոսի այս պնդմանը, որ ավելի շուտ ցանկություն էր, քան համոզմունք: Իհարկե, այսօր մեզ համար հեշտ է դատավոր լինել արդեն կատարված պատմական փաստերին: Բայց փորձենք մեզ դնել նրանց տեղում, ում առջև անհայտ ապագան էր, փորձենք և ներողամիտ լինենք: «Պահպանողական» հայ ժողովուրդը, որի տառապած հոգուն բնավ էլ խորթ չէր սոցիալական արդարության երազանքը, իրեն թույլ տվեց գայթակղվել բոլշևիկյան սոցիալիզմի խայծով, ստանալով այն, ինչ ունեցանք՝ խեղված սոցիալիզմ: Արժրունին ապագայի խոսնակ էր, որը հարյուր տարի առաջ էր նայում: Համլետյան մտահոգությամբ դիտարկելով շավղից դուրս եկած մեր ժամանակը, որը մեր ժամացույցը նորից հետ է տանում ավել կամ պակաս հարյուր տարով, մենք զարմանքով և հիացմունքով պիտի արձանագրենք Արժրունու հրապարակախոսության արդիականությունը, երեկվա համար ասված նրա կարգախոսները կրկնելով այսօր՝ հայեր, հրաժարվեք շարժիական վաճառականությունից, կապիտալը նետեք արտադրության ոլորտը, յուրացրեք քաղաքակրթության, մարդկության հանճարների ստեղծած ոսկե գանձը, թանկ գնահատեք ազատությունը և եթե ձեր դեմ բարբարոս է, պատասխանեք զենքով ու արյունով:

Հիշենք «Մշակի» առաջին համարի պերճախոս առաջնորդողը՝ «Երեկ, Այսօր, էգուց»: Իմաստուն է այն ազգը, որ կարողանում է իրար շաղկապել այս երեք ժամանակները:

Արժրունին մեր Երեկն է, սակայն Այսօր քայլում է մեղ հետ՝ Վաղվա արդար գալիքին հետամուտ:

ВЫДАЮЩИЙСЯ РЕФОРМАТОР АРМЯНСКОЙ ПЕЧАТИ

Л. М. ГЕВОРКЯН

Резюме

Великий армянский публицист Григор Арцруни (1845—1892), создав в 1872 г. армянскую национальную газету европейского типа «Мшак», широко пропагандировал на ее страницах достижения мировой цивилизации. Обсуждая насущные вопросы времени, Гр. Арцруни сумел сделать свою газету действенной силой, просвещающей народ и повышающей его национальное самосознание и политическую зрелость. Идеи публициста, основанные на критериях общечеловеческого гуманизма и цивилизации, не только не устарели, но, приобретая новый смысл, остались актуальными и сегодня.